ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼՈՒՍԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գևորգյան,

ի պատասխան Ձեր 17.07.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածի (այսուհետ՝ Հոդված) 1-ին մասի՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա, Հոդվածի 2-րդ մասի՝ 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների կողմից կատարված տեղատեսության և ձեռնարկված միջոցառումների արդյունքում Կենտրոն վարչական շրջանի Բուզանդի փողոցի հ.10 հասցեին հարող տարածքում տեղադրված մետաղական ձողերն ապամոնտաժվել են:

Տեղեկացվում է նաև, որ վերոհիշյալ հատվածում, Հոդվածի համաձայն, վարչական վարույթ հարուցելու հիմքերը բացակայում են, հաշվի առնելով, որ կատարված տեղատեսությամբ նշված հատվածում՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ծառայության մատուցման, մասնավորապես՝ վճարովի ավտոկայանատեղիի կազմակերպման դեպքեր չեն արձանագրվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ